## «Կոշտ կենցաղային թափոնների քարտեզագրում և կառավարում »

## Ծրագրային համակարգ

## 1.Աղբահանության ցանցի մոդելավորման ծրագրային համակարգի ուղեցույց

Ծրագրի նշանակությունը

- Մուտքագրել, պահպանել և ցուցադրել գործող աղբահանության մոդելները յուրաքանչյուր բնակավայրի համար
- Տարբեր մուտքային տվյալների հիման վրա մոդելավորել տվյալ բնակավայրի համար աղբահանության օպտիմալ մոդել

Ծրագրի կառուցվածքը

Ծրագրի ամբողջ գործիքակազմը բաժանվում է 3 հիմնական խմբերի՝

- Տվյալների շտեմարան, որտեղ մուտքագրված են ինչպես հաճախ կիրառվող ընդհանուր տվյալներ, այնպես էլ կոնկրետ բնակավայրերին կամ աղբահանության մոդելների վերաբերվող տվյալներ:
  Օրինակ՝ մեքենաների տեսակներ, օբյեկտների տեսակներ, հաստիքներ, աղբարկղերի տեսակներ և այլն
- Մոդելավորման գործիքներ, որոնց միջոցով հնարավոր է իրականացնել աղբահանության ցանցի մոդելավորում: Գործիքները թույլ են տալիս տարբեր պարամետրերի և մուտքային տվյալների ընտրության միջոցով ստանալ տարբեր մոդելներ, որոնցում նախապատվություն է տրվում որևէ ցուցանիշի, օրինակ՝ ֆինանսական, սոցիալական կամ բնապահպանական:
- Մոդելի վիզուալիզացիա

Գործիքների նկարագիր

<u>«Օգտատերեր»</u>

«Օգտատերեր» բաժինը նախատեսված է համակարգում օգտատերեր ավելացնելու համար.




Օգտատեր ավելացնելու համար անհրաժեշտ է սեղմել  կոճակին,որից հետո կբացվի նոր պատուհան՝ օգտատիրոջ տվյալները լրացնելու համար:

Օգտատեր ավելացնելու համար պարտադիր լրացման դաշտեր են՝ օգտատիրոջ անուն, ազգանուն,օգտանուն, էլ. հասցե, հեռախոսահամար, իրավասություն, բնակավայր, գաղտնաբառ որին պետք է կցվի տվյալ օգտատերը և գաղտնաբառ.




«Օգտատերեր» հատվածում առկա «Ակտիվ» checkbox-ը անհրաժեշտ է նշել,որպեսզի տվյալ օգտատերի մուտքը համակարգ հնարավոր լինի (գծանշված է կարմիրով):

Օգտատիրոջ տվյալները ավելացնելուց հետո անհրաժեշտ է սեղմել  կոճակին:


Բաժնում հնարավոր է նաև օգտատերի անվանման միջոցով որոնում կատարել (գծանշված է կանաչով).




<u>«Գրադարան»</u>

«Գրադարան» բաժինը իր հերթին ևս կազմված է մի քանի ենթաբաժիններից,որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է համակարգում առկա դասակարգված տվյալների բազան.




Բաժնում հնարավոր է տվյալների անվանմանումների միջոցով որոնում կատարել՝



Հարկ է նշել,որ տվյալ բաժիններում հնարավոր է ինչպես տվյալ ավելացնել՝ ,այնպես էլ խմբագրել տվյալները՝ կամ հեռացնել՝ համակարգից: Ներկայացնենք ենթաբաժինները.

- *«Մարզեր»* ենթաբաաժինը, ներկայացնում է ՀՀ 11 մարզերը.

Մարզեր (11)

| Հ/Հ | Անվանում | Գործողություն |
|---|---|---|
| 1 | Երևան | |
| 2 | Կոտայքի մարզ | |
| 3 | Արմավիրի մարզ | |
| 4 | Արագածոտնի մարզ | |
| 5 | Արարատի մարզ | |
| 6 | Գեղարքունիքի մարզ | |
| 7 | Լոռու մարզ | |
| 8 | Շիրակի մարզ | |
| 9 | Սյունիքի մարզ | |
| 10 | Վայոց Ձորի մարզ | |
| 11 | Տավուշի մարզ | |

Մարզեր (11)

| Հ/Հ | Անվանում | Գործողություն |
|---|---|---|
| 1 | Երևան | |
| 2 | Կոտայքի մարզ | |
| 3 | Արմավիրի մարզ | |
| 4 | Արագածոտնի մարզ | |
| 5 | Արարատի մարզ | |
| 6 | Գեղարքունիքի մարզ | |
| 7 | Լոռու մարզ | |
| 8 | Շիրակի մարզ | |
| 9 | Սյունիքի մարզ | |
| 10 | Վայոց Ձորի մարզ | |
| 11 | Տավուշի մարզ | |

- *«Բնակավայրեր»* ենթաբաժինը ներկայացնում է ՀՀ–ում առկա բոլոր բնակավայրերը.

- *«Օբյեկտի տեսակները»* ենթաբաժինը ներկայացնում է տվյալ բնակավայրերում առկա օբյեկտների տեսակները և տվյալներ մակերեսի/բն.քանակի, ինչպես նաև հավելյալ տվյալներ աղբահանության գործակիցների վերաբերյալ.

‹ 1 2 3 ›

Օբյեկտի տեսակներ (76)

| Հ/Հ | Անուն | Տեսակ | Բնակիչների քանակ | Մակերես | Ամառային սեզոնի գործակից | Ձմեռային սեզոնի գործակից | Սոցիալական գործակից | Գեն. աղբի օրական ծավալ ամառային սեզոն | Գեն. աղբի օրական ծավալ ձմեռային սեզոն | Գործողություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | Շենք 3/3 | Բնակելի | 3 | | 1 | 0.9 | 0.65 | 0.0057525 | 0.00517725 | |
| 12 | Շենք 4/4 | Բնակելի | 4 | | 1 | 0.9 | 0.65 | 0.00767 | 0.006903 | |
| 13 | Շենք 140.8/150 | Բնակելի | 140 | | 1 | 0.9 | 0.65 | 0.546 | 0.4914 | |
| 14 | Շենք 90/81.9 | Բնակելի | 82 | | 1 | 0.9 | 0.65 | 0.3198 | 0.28782 | |
| 15 | Շենք 50/39.09 | Բնակելի | 39 | | 1 | 0.9 | 0.65 | 0.1521 | 0.13689 | |
| 16 | Շենք 50/42.5 | Բնակելի | 43 | | 1 | 0.9 | 0.65 | 0.1677 | 0.15093 | |
| 17 | Շենք 60/57 | Բնակելի | 57 | | 1 | 0.9 | 0.65 | 0.20007 | 0.180063 | |
| 18 | Շենք 30/21.2 | Բնակելի | 21 | | 1 | 0.9 | 0.65 | 0.04251975 | 0.038267775 | |
| 19 | Շենք 20/18.42 | Բնակելի | 18 | | 1 | 0.9 | 0.65 | 0.051246 | 0.0461214 | |
| 20 | Շենք 10/6.8 | Բնակելի | 7 | | 1 | 0.9 | 0.65 | 0.0273 | 0.02457 | |
| 21 | Նպարեղենի խանութ 50- | Հասարակական | | 25 | 1.15 | 1.05 | 0.65 | 0.0049222875 | 0.00445433625 | |
| 22 | Նպարեղենի խանութ 50+ | Հասարակական | | 70 | 1.9 | 1.8 | 0.65 | 0.010711896 | 0.0098633808 | |

- *«Օբյեկտներ»* ենթաբաժինը ներկայացնում է բնակավայրերում առկա օբյեկտների տեղակայման վայրերը.




Հարկ է նշել, որ տվյալ ենթաբաժնում հնարավոր է ըստ մարզերի և/կամ բնակավայրերի, օբյեկտի տեսակների կատարել ֆիլտրում անհրաժեշտ օբյեկտի որոնման ընթացքը հեշտացնելու համար.




- *«Խոշորացված համայնքներ»* ենթաբաժինը ներկայացնում է ՀՀ խոշորացված համայնքները և նրանց կազմի մեջ մտնող բնակավայրերը.




Տվյալ ենթաբաժնում հնարավոր է նաև նշել/ֆիլտրել տվյալ խոշորացված համայնքի գլխավոր բանակավայրը, և արդյունքում բնակավայրի որոնումը ավելի կհեշտանա.




- *«Աղբամանների/Բունկերների տեսակներ»* ենթաբաժինը ներկայացնում է ՀՀ տարածքում աղբահանության համար օգտագործվող աղբամաններ/բունկերների տեսակների վերաբերյալ հավելյալ տվյալներ.




| Հ/Հ | Նկար | Անուն | Տարրայի տեսակ | Նյութի տեսակ | Բացվածքի տեսակ | Բեռնաթափման տեսակ | Աղբի տեսակ | Գործողություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | USSR metal | Աղբաման | Մետաղական | Բաց | Ավտոմատ | Չտեսակավորված | |
| 3 | | Սանիտեկի | Աղբաման | Պոլէթիլենայի | Հատուկ բացվածքով | Ավտոմատ | Չտեսակավորված | |
| 4 | | Քաղ. նոր | Աղբաման | Մետաղական | Բաց | Ավտոմատ | Չտեսակավորված | |
| 5 | | Ծենքի բունկեր | Բունկեր | Բետոնե | Հատուկ բացվածքով | Ձեռքով | Չտեսակավորված | |
| 6 | | Պլաստիկ անիվներով | Աղբաման | Պոլէթիլենայի | Փակ | Ավտոմատ | Չտեսակավորված | |
| 7 | | Household bin | Աղբաման | Այլ | Բաց | Ձեռքով | Չտեսակավորված | |

Տվյալ ենթաբաժնում հնարավոր է աղբամանները/բունկերները ֆիլտրել ըստ իրենց տարրաների տեսակների.




- *«Բնական/Սոցիալական օբյեկտների տեսակներ»* ենթաբաժինը ներկայացնում է բնակավայրերում հանդիպող բնական և սոցիալական օբյեկտները, օր՝ գետ, լիճ, ճանապարհ.




| Հ/Հ | Անուն | Տեսակ | Գործողություն |
|---|---|---|---|
| 1 | Գետ | Բնական | |
| 2 | Ճանապարհ | Սոցիալական | |

Տվյալ ենթաբաժնում հնարավոր է օբյեկտները ֆիլտրել ըստ իրենց տեսակների.



- *«Սպասարկող կազմակերպություններ»* ենթաբաժինը ներկայացնում է ՀՀ տարածքում աղբահանություն իրականացնող կազմակերպությունները և դրանց հավելյալ տվյալները.


Սպասարկող կազմակերպություններ (4)

| Հ/Հ | Անուն | ՀՎՀՀ | Հեռախոսահամար | Բնակավայրեր | Գործունեության հասցե | Պատկանելիություն | Գործողություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | Ստեփանավանի համայնքապետարան | 56328596 | 25632523 | Ստեփանավան | Սոս Սարգսյանի 8 | Համայնքային | |
| 100 | Մաքուր երկիր ՍՊԸ | 0 | 093805140 | Գոռավան | Պուշկին փ. | Մասնավոր | |
| 101 | Արենի ՀՈԱԿ | 0 | 077845443 | Արենի | 0 | Համայնքային | |

Տվյալ բաժնում հնարավոր է տեսնել տվյալ սպասարկող կազմակերպության կողմից շահագործվող մեքենաների ցանկը՝ , այն բնակավայրերը, որոնք սպասարկում է տվյալ կազմակերպությունը՝ , տվյալ կազմակերպության աղբավայրերը՝
Տվյալ ենթաբաժնում հնարավոր է կազմակերպությունները ֆիլտրել ըստ իրենց պատկանելիության տեսակների՝ մասնավոր, համայնքային, խոշորացված համայնքների.




Տվյալները հնարավոր է նաև արտահանել xls ֆորմատով – XLS

- *«Մեքենայի մակնիշներ»* ենթաբաժինը ներկայացնում է աղբահանության համար օգտագործվող մեքենաների մակնիշների անվանումների բառարանը.




Մեքենայի մակնիշները (20)

| Հ/Հ | Անուն | Գործողություն |
|---|---|---|
| 14 | Ford | |
| 15 | Infiniti | |
| 16 | Audi | |
| 17 | GAZ | |
| 18 | Պազ | |
| 19 | Բովա | |

- *«Մեքենայի մոդելներ»* ենթաբաժինը ներկայացնում է աղբահանության համար օգտագործվող մեքենաների մոդելների անվանումների բառարանը.




Մեքենայի մոդելները (7)

| Հ/Հ | Մեքենայի մակնիշ | Անուն | Գործողություն |
|---|---|---|---|
| 37 | RENAULT | MIDLINER M230.13C | |
| 38 | GAZ | 33098 | |
| 39 | MAZ | 551605-280 | |
| 40 | LCB | 3CX-էկսկավատոր | |
| 41 | GS | 10-07 greider | |
| 42 | Ford | Transit | |
| 44 | T40 | T40 | |

Տվյալ ենթաբաժնում հնարավոր է մեքենաները ֆիլտրել ըստ իրենց մակնիշի




- *«Մեքենայի տեսակներ»* ենթաբաժինը ներկայացնում է աղբահանության համար օգտագործվող մեքենաների տվյալները, ինչպես նաև տվյալ մեքենայի տեխնիկական սպասարկման՝ և վառելիքի ծախսերի՝ , 1 մեքենայի ծախսերը ըստ 1 տարվա՝ , աղբի տեսակների՝ և քանակի վերաբերյալ հավելյալ տվյալներ՝ մեքենայի տեսակի հաստիքներ՝ .

Մեքենայի տեսակներ (9)

| Հ/Հ | Մեքենայի մակնիշ | Մեքենայի մոդել | Զիաուժ | Տեխ. սպ. ծախս 1 կմ-ի (ՀՀԴ) | Վառելիքի ծախս 1 կմ-ի (ՀՀԴ) / բեռնված | Վառելիքի ծախս 1 կմ-ի (ՀՀԴ) / դատարկ | Մեքենայի ծախս 1 տարվա (ՀՀԴ) | Գործողություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 39 | RENAULT | MIDLINER M230.13C | 226 | 200005 | 76 | 60.8 | 99000 | |
| 40 | GAZ | 33098 | 149 | 4 | 73.8 | 41 | 44000 | |
| 41 | MAZ | KO-449-41 | 170 | 5.82 | 83.6 | 83.6 | 77000 | |
| 42 | LCB | 3CX-էկսկավատոր | 69 | 760000 | 0 | 0 | 0 | |
| 43 | GS | 10-07 greider | 77 | 120000 | 0 | 0 | 0 | |
| 44 | Ford | Transit | 200 | 6.33 | 0 | 0 | 222000 | |

Տվյալ հատվածում մեքենաները հնարավոր է ֆիլտրել ըստ իրենց մակնիշի և մոդելի




- *«Մեքենայի ծախսի տեսակներ»* ենթաբաժինը ներկայացնում է մեքենայի ծախսի տեսակների անվանումների բառարանը.




- *«Վառելիքի տեսակներ»* ենթաբաժինը ներկայացնում է մեքենայի վառելիքի տեսակների անվանումների բառարանը.




- *«Տեխ.սպասարկման տեսակներ»* ենթաբաժինը ներկայացնում է մեքենայի տեխ.սպասարկման տեսակների անվանումների բառարանը



Անուն

Տեխ. սպասարկման տեսակներ (7)

| Հ/Հ | Անուն | Գործողություն |
|---|---|---|
| 2 | Շարժիչի յուղի փոխարինում | |
| 3 | Փոխանցման տուփի յուղի փոխարինում | |
| 4 | Արգելակման կոճղակների փոխարինում | |
| 5 | Անվադողերի փոխարինում | |
| 6 | Այլ ծախսեր | |
| 7 | Մարտկոցի փոխարինում | |
| 9 | Ախտահանում | |

- *«Աղմինիստրատիվ ծախսի տեսակներ»* ենթաբաժինը ներկայացնում է ադմինիստրատիվ ծախսերի տեսակների անվանումների բառարանը.



Անուն

Ադմինիստրատիվ ծախսի տեսակներ (10)

| Հ/Հ | Անուն | Գործողություն |
|---|---|---|
| 4 | Դիզ. վառելիք | |
| 5 | Սեղմված բնական գազ | |
| 6 | Պահեստամասեր | |
| 7 | Տնտեսական ապրանքներ / նյութեր | |
| 8 | Աշխատանքային հագուստ | |
| 9 | Գարաժի վարձակալություն | |

- *«Հաստիքներ»* ենթաբաժինը ներկայացնում է աղբահանություն իրականացնող հաստիքների անվանումների բառարան, ինչպես նաև յուրաքանչյուր հաստիքին հատկացվող հաշվարկային աշխատավարձի չափը.




| Հ/Հ | Անուն | Հաշվարկային աշխատավարձ | Գործողություն |
|---|---|---|---|
| 2 | Հավաքարար | 103600.00 | |
| 3 | Վարորդ | 140000.00 | |
| 4 | Բանվոր | 120000.00 | |
| 5 | Բրիգադիր | 140000.00 | |
| 6 | Գանձող | 89610.00 | |
| 7 | Օպերատոր | 150000.00 | |
| 8 | Պահակ | 107000.00 | |
| 9 | Աղբահանության մեքենայի վարորդի օգնական | 150000.00 | |
| 10 | Հավաքարար (կես դրույք) | 52000.00 | |

- *«Գարաժներ»* ենթաբաժինը ներկայացնում է  յուրաքանչյուր սպասարկող կազմակերպության կողմից շահագործվող գարաժների տեղակայման վայրերի հետ կապված տվյալներ.




Տվյալ ենթաբաժնում հնարավոր է որոնում կատարել՝ ֆիլտրելով՝ համաձայն բնակավայրի և սպասարկող կազմակերպության.



- *«Վերամշակման գործարաններ»* ենթաբաժինը ներկայացնում է տվյալներ ՀՀ–ում գործող աղբի վերամշակման գործարանների տեղակայման վայրերի, ինչպես նաև վերամշակվող աղբի տեսակների վերաբերյալ.




Տվյալ ենթաբաժնում հնարավոր է որոնում կատարել՝ ֆիլտրելով՝ համաձայն բնակավայրի և աղբի տեսակի.




Այս հատվածում հնարավոր է տվյալներ արտահանել xls  և kmz  ֆորմատներով.


- *«Հանդերձանք»* ենթաբաժինը ներկայացնում է տվյալներ աղբահանություն իրականացնող աշխատակազմին հատկացված հանդերձանքի տեսակների և նրանց արժեքի վերաբերյալ.




| Հ/Հ | Անուն | Արժեք | Գործողություն |
|---|---|---|---|
| 2 | Համազգեստ | 15000 | |
| 3 | Երկարաճիտ կոշիկ | 7000 | |
| 4 | Աշխատանքային հագուստ | 415000 | |

- *«Նյութեր/պարագաներ»* ենթաբաժինը ներկայացնում է տվյալներ աղբահանության համար օգտագործվող նյութերի և պարագաների,ինչպես նաև նրանց արժեքների վերաբերյալ:

Անուն

Նյութեր/Պարագաներ (5)

| Հ/Հ | Անուն | Արժեք | Գործողություն |
|---|---|---|---|
| 2 | Ավել | 500 | |
| 3 | Սավոկ | 1000 | |
| 4 | Ախտահանման միջոց - 1լ | 500 | |
| 5 | Հատուկ նպատակային նյութեր | 40000 | |
| 6 | Տնտեսական ապրանքներ / նյութեր | 862000 | |

– *«Վերբեռնել ուղեցույց»* ենթաբաժնում ադմինիստրատոր դերից հնարավոր է ավելացնել ծրագրից օգտվելու ուղեցույց: Ուղեցույցը հասանելի կլինի համակարգում գրանցված բոլոր տեսակի օգտատերերի համար:

Անվանում

Ուղեցույցեր (1)

| Հ/Հ | Անվանում | Ուղեցույց/pdf | Գործողություն |
|---|---|---|---|
| 6 | Ուղեցույց | PDF | |

<u>«Աղբավայրեր»</u>

«Աղբավայրեր» բաժնում նախատեսված է  ներկայացնել ՀՀ տարածքում շահագործվող աղբավայրերի վերաբերյալ տվյալներ՝ տեղակայման վայրերը, տվյալ աղբավայրում առկա բնական և սոցիալական օբյեկտները (գետ, լիճ, ճանապարհ), կուտակվող աղբի տեսակները և դրանց մակերեսը.(գծանշված է կանաչով)

Անուն

Աղբավայրեր (10)

| Հ/Հ | Անուն | Մակերես | Ծավալ (մ3) | Գործողություն |
|---|---|---|---|---|
| 3 | Ստեփանավանի աղբավայր | 2 | 1 | |
| 5 | Չիվա-Ռինդ աղբավայր | 1 | 1 | |
| 6 | Ելփինի աղբավայր | 1 | 1 | |
| 7 | Արենիի աղբավայր | 1 | 1 | |
| 8 | Ագարակաձորի աղբավայր | 1 | 1 | |
| 9 | Խաչիկի աղբավայր | 1 | 1 | |

Բաժնում հնարավոր է աղբավայրի անվանման միջոցով որոնում կատարել (գծանշված է կարմիրով)։ Հարկ է նշել նաև, որ այս բաժնում նույնպես հնարավոր է տվյալներ ավելացնել և հեռացնել (գծանշված է կապույտով).




Աղբավայրերի ցանկը հնարավոր է արտահանել xls ֆորմատով՝ XLS

<u>«Տեղակայման վայրեր»</u>

«Տեղակայման վայրեր» բաժինը ներկայացնում է աղբավայրերի գտնվելու վայրերը և տեղակայման կետերը քարտեզի վրա.




Յուրաքանչյուր տեղակայման կետ կցված է տվյալ բնակավայրում իրականացվող

աղբահանության մոդելին։ Այս բաժնում ներկայացված են ինչպես տվյալ աղբամանի տեղակայման կետի վերաբերյալ հավելյալ տվյալներ, այնպես էլ իր տեսակի և քանակի, օրվա ընթացքում գեներացվող աղբի քանակի վերաբերյալ.




Այս բաժնում ևս հնարավոր է որոնում կատարել համաձայն մարզի և բնակավայրի, ինչպես նաև տեղակայման կետ ավելացնել և հեռացնել.




<u>«Մոդելներ»</u>

«Մոդելներ» բաժինը նախատեսված է աղբահանության երթուղիների մոդելավորված տարբերակը ներկայացնելու համար: Տվյալ բաժինը իր հերթին բաժանված է ենթաբաժինների.




Դրանք են՝

- *«Երթուղիներ»* – այս ենթաբաժնում ներկայացված են յուրաքանչյուր բնակավայրում իրականացվող աղբահանության երթուղիները և իրենց հեռավորությունը, ինչպես նաև իրենց նախապես կցված զարաժները, տեղակայման կետերը և աղբավայրերը.




Այս հատվածում ևս հնարավոր է որոնում կատարել համաձայն՝ երթուղու անվանման և տեղակայման կետի/կանգառի, ինչպես նաև երթուղու կառուցվածքի մեջ հնարավոր է փոփոխություն կատարել ՝ կետ ավելացնելով և հեռացնելով համակարգից (գծանշված է կանաչով):

- *«Աղբահանության մոդելներ»* – այս ենթաբաժնում ներկայացված են բնակավայրերում իրականացվող աղբահանության մոդելները և իրենց սպասարկող կազմակերպությունները: Յուրաքանչյուր աղբահանության մոդելի կցված է տվյալ բնակավայրում իրականացվող աղբահանության երթուղիները և յուրաքանչյուր երթուղու սպասարկման ժամանակահատվածը ՝ ամիս/օր/ժամ, սպասարկող կազմակերպության մեքենան (գծանշված է կարմիրով): Աղբահանության մոդելներին կցված է նաև իրենց ադմինիստրատիվ ծախսերի տեսակները և գումարը, աշխատավարձային ֆոնդերը ՝ հաստիքները և աշխատակիցների քանակը, աղբահանության համար օգտագործվող

հանդերձանքի տեսակի և քանակի վերաբերյալ տվյալներ, օգտագործվող նյութերի/պարագաների քանակի վերաբերյալ տվյալներ (գծանշված է կարմիրով)։ Ծրագիրը ավտոմատ կերպով հաշվարկում է աղբահանության համար ներդրված ընդհանուր գումարի չափը (գծանշված է կապույտով)։
Այս հատվածում նս հնարավոր է որոնում կատարել համաձայն ՝ բնակավայրի և սպասարկող կազմակերպության, ինչպես նաև մուտքագրված տվյալներում փոփոխություն կատարել ՝ ավելացնելու և հեռացնելու ֆունկցիաների շնորհիվ (գծանշված է կանաչով).




- *«Աղբահանության ցանցի մոդել»* – այս ենթաբաժնում հնարավոր է կազմել մեկ ամբողջական աղբահանության ցանց համակարգում նախապես մուտքագրված աղբահանության մոդելներից.




Այս հատվածում առկա «Ակտիվ» checkbox–ը անհրաժեշտ է նշել,որպեսզի կազմված երթուղային ցանցը ցուցադրվի համակարգում առկա քարտեզի վրա (գծանշված է կանաչով)
Այս ենթաբաժնում նույնպես հնարավոր է որոնում իրականացնել որոնման դաշտում մուտքագրելով տվյալ աղբահանության ցանցի մոդելի անվանում, նոր մոդել ավելացնել և հեռացնել (գծանշված է կարմիրով)




- *«Խմբավորում»* – այս բաժինը թույլ է տալիս բնակավայրերի օբյեկտների և դրանց տեղակայման վայրերի և դրանց կողմից գեներացվող աղբի օրական ծավալի հիման վրա որոշել աղբավայրերի տեղակայման օպտիմալ վայրեր: Որպես մուտքային պարամետր հնարավոր է մուտքագրել նաև տեղակայման վայրի առավելագույն հեռավորությունը օբյեկտներից և տեղակայման վայրերի նվազագույն հեռավորությունը միմյանցից.




- *«Տեղակայման վայրեր/քրտեզ»* – այս բաժինը թույլ է տալիս ընտրված բնակավայրերի համար իրականացնել տեղակայման վայրերի խմբավորում, այնպես որ մաքրման գոտիները բաժանվեն հիմնական ուղղությունների վրա, ըստ կենտրոնական (մեծ) փողոցների: Բաժնում առկա ծրագրային գործիքները թույլ են տալիս նաև իրականացնել տեղակայման վայրերի տեղափոխություն՝ մի խմբից նոր խումբ կամ նույնիսկ ստեղծել այլ նոր խումբ.




- *«Մոդելավորում»* – այս բաժինը թույլ է տալիս ընտրված բնակավայրի համար իրականացնել օպտիմալ մոդելի հաշվարկ՝ հիմնվելով մուտքային պարամետրերի վրա: Մուտքային պարամետրեր են հանդիսանում՝ հավաքման հաճախականությունը, աղբարկղերի տեսակը, մեքենայի տեսակը, աղբավայրը: Որպես մուտքային պարամետր հնարավոր է մուտքագրել նաև տեղակայման վայրի առավելագույն հեռավորությունը օբյեկտներից և տեղակայման վայրերի նվազագույն հեռավորությունը միմյանցից: Հաշվարկի արդյունքում համակարգը ավտոմատ որոշում է աղբարկղերի օպտիմալ վայրեր, իրականացնում տեղակայման վայրերի խմբավորում և երթերի կազմում: Յուրաքանչյուր երթի համար ավտոմատ կերպով հաշվարկվում է երթի երկարությունը,հավաքված աղբի ծավալը, վազքը՝ բեռնված և դատարկ վիճակում, վառելիքի ծախսը յուրաքանչյուր երթի համար՝ առանձնացված բեռնված և դատարկ վիճակում.






Յուրաքանչյուր հաշվարկված երթի համար ծրագիրը ավտոմատ կերպով ցույց է տալիս տվյալ երթի երկարությունը,հավաքված աղբի ծավալը, վագքը՝ բեռնված և դատարկ վիճակում, վառելիքի ծախսը յուրաքանչյուր երթի համար՝ առանձնացված բեռնված և դատարկ վիճակում:Համակարգը թույլ է տալիս հաշվարկել աղբահանության մոդել, ինչպես թափոնների տեսակավորումով, այնպես էլ առանց տեսակավորման: Տեսակավորումը կատարվում է ըստ ստորև նշված աղբի տեսակների.

1. Կենսաքայքայվող
2. Թուղթ
3. Պլաստիկ
4. Ապակի
5. Չտեսակավորված (մետաղ,շինարարական)

*Առանց տեսակավորման*



*Տեսակավորումով*




**Մոդելի հաշվարկի** համար անհրաժեշտ է մուտքագրել տվյալները հետևյալ հաջորդականությամբ՝

**Քայլ 1** – Ընտրում ենք մարզը և բնակավայրը: Բնակավայրը ընտրելուց հետո համակարգը ավտոմատ ցուցադրում է տվյալ բնակավայրի օբյեկտները քարտեզի վրա և դրանց քանակը առանձին թվով, ինչպես նաև գեներացվող թափոնների օրական ծավալը՝ առանձին տեսակների և ընդհանուր:

**Քայլ 2** – Ըստ անհրաժեշտության մուտքագրում ենք օբյեկտի և տեղակայման վայրի առավելագույն հեռավորությունը օբյեկտից:

**Քայլ 3** – Տեղակայման վայրերի նվազագույն հեռավորությունը:

**Քայլ 4** – Մուտքագրվում է յուրաքանչյուր տեսակի թափոնի հավաքման հաճախականությունը կամ այն կարող է հաշվարկվել ավտոմատ մեքենայի ընտրության դեպքում:

*******Մեքենան ընտրելիս համակարգը ըստ մեքենայի ծավալի ավտոմատ հաշվարկում և լրացնում է յուրաքանչյուր տեսակի հավաքման անհրաժեշտ հաճախականությունը:

**Քայլ 5** – Ընտրել աղբարկղի տեսակը:

**Քայլ 6** – Ընտրել մեքենայի տեսակը:

**Քայլ 7** – Ընտրել աղբավայրը:

******* Աղբարկղի, մեքենայի և աղբավայրի ընտրության համար համակարգը առաջարկում է ընտրել նախապես մուտքագրված տեսակներից որևէ մեկը:

**Քայլ 8** – ☑ Գլխավորը ըստ համարակալման այս մեթոդով հաշվարկը ընտրվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է առանձնացնել որևէ փողոց, երթուղի կամ թաղամաս, որը պետք է մաքրվի առանձին սահմանված գրաֆիկով և հերթականությունով:

**Քայլ 9 –** 

այս մեթոդովհամակարգը մոդելի հաշվարկը կատարելու է տեսակավորումով:
**Քայլ 10 –** Սեղմել «Հաշվարկել տեղակայման վայրեր» կոճակը, որը ավտոմատ կերպով կհաշվարկի աղբարղերի տեղակայման օպտիմալ վայրերը և անհրաժեշտ աղբարկղերի քանակը և դրանք  քարտեզի վրա կցուցադրի, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի քանակը առանձին թվով :
**Քայլ 11 –** Անհրաժեշտության դեպքում հնարավոր է տեղակայման վայրերից ստեղծել առանձին խումբ, այն դարձնել գլխավոր և սահմանել հավաքման հերթականությունը:
Խումբը ստեղծվում է «Ավելացնել  նոր խումբ» կոճակով,




իսկ խմբերիմիավորումը իրականացվում է «Միավորել փողոցները» կոճակով.




**Քայլ 12 –** Սեղմում ենք «Հաշվարկել երթուղիները», որից հետո համակարգը ավտոմատ հաշվարկում է օպտիմալ երթուղիներ, որով պետք է շարժվի մեքենան և աղբարկղերի հավաքման հաջորդականությունը, ինչպես նաև առանձին հաշվարկով ցուցադրվում է հաշվարկված մոդելով աղբահանություն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ աշխատավարձային ֆոնդը, ավտոպարկի շահագործման ծախսերը, վառելիքի ծախսը, օգտագործվող նյութերը, պարագաները և հանդերձանքը: Հաշվարկված մոդելը հնարավոր է պահպանել և դիտել «Քարտեզ/մոդելավորումներ» բաժնում :

## «Աղբի հավաքման գրաֆիկ»

Ծրագիրը հաշվարկում և կազմում է աղբի հավաքման գրաֆիկ յուրաքանչյուր բնակավայրի համար.



**msw.locator.am/driver**

Աղբահանություն իրականացնող վարորդը հնարավորություն ունի տեսնելու օօպտիմալ աղբի հավաքման երթուղին, ինչպես նաև աղբամանների տեղակայման




վայրերը.

**Անհրաժեշտ է՝**




**Քայլ 1–** Ընտրել մարզը, բնակավայրը և մոդելի տեսակը.

**Քայլ 2 –** Ընտրել օրը, որի ընթացում պետք է կատարվի աղբահանությունը.




**Քայլ 3 –** Նշել տվյալ checkbox – ը 

և քարտեզի վրա կցուցադրվի օպտիմալ երթուղին և աղբամանների տեղակայման վայրերը.




## 2. Պիլոտային համայնքներում դասընթացների / թրեյնինգների անցկացում

**Ստեղծված ծրագրային համակարգը և ոգտվողների ուղեցույցը ներկայացվել է պիլոտային համայնքներում:**

Տեղային անձնակազմի հետ անցկացվել են երկօրյա ուսուցողական դասընթացներ/թրեյնինգներ , ցուցադրվել են ծրագրակազմի օգտագործման գործընթացը, կազմվել են կոնկրետ մոդելներ, մեկնաբանվել են ծրագրակազմի աշխատանքի արդյունքների ներկայացման ձևերը և օրինակները:

Բացատրվել և ցուցադրվել է , ինչպես նոր մուտքային տվյալների ավելացումով իրականացնել համայնքին վերաբերվող այլ ֆինանսական և կառուցվածքային մոդելներ, օրինակ, համայնքի զարգացման ծրագրերի համար կազմել նոր տրանսպորտային, ճանապարհային մոդելներ/երթուղիներ , կենցաղային սպասարկման օպտիմալ մոդելներ:

Քննարկվել են համայնքներում կարճաժամկետ և միջնաժամկետ հնարավոր ծրագրերի իրականացման վերաբերվող հարցեր, ապահովելու աղբավայրերում կենցաղային թափոնների ծավալի մինիմալ չափերը:

1. Ստեփանավանի համայնք:

Մասնակիցներ.

- Արարատ Չերքեզյան, «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն ;
- Մարուսյա Բալայան, Ստեփանավան համայնքի ղեկավարի օգնական ;
- Արման Սուքիասյան, Ստեփանավան համայնքապետարանի  քաղաքաշինու-թյան և քաղաքածինության բաժնի պետ ;
- Աշոտ մարտիրոսյան, «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ գլխ. ինժեներ:

2. Արենիի խոշորացված համայնք

- Զեմֆիրա Հարությունյան, գլխավոր մասնագետ
- Նորայր Գրիգորյան, առաջատար մասնագետ
- Լիանա Բաբայան, առաջատար մասնագետ
- Արամ Աթանեսյան, առաջատար մասնագետ
- Արմինե Ավետիսյան, Արենի ՀՈԱԿ-ի հաշվապահ
- Սերյոժա Սիմոնյան, Արենի ՀՈԱԿ-ի տնօրեն
- Աշոտ Կարապետյան, Արենի ՀՈԱԿ-ի տնօրենի օգնական

**3.** Գոռավանի համայնք

Նարեկ  Հովհաննիսյան, համայնքապետարանրի առաջատար մասնագետ